ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 252 /242

10 սեպտեմբեր 2018թ.

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշումով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 28-Ն, 2015 թվականի օգոստոսի 17-ի թիվ 48 որոշումները, ինչպես նաև 2015 թվականի հուլիսի 1-ի և 2015 թվականի օգոստոսի 19-ի <<Աճուրդը և կրկնաճուրդը չկայացած համարելու մասին>> արձանագրությունները և Էդգար Աշխարհաբեկի Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էդգար Աշխարհաբեկի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով օտարել քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 32/1 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, համայնքի սեփականություն համարվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերից 0,019 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 12052015-07-0073) մեկնարկային գնով՝859 560(ութ հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Էդգար Աշխարհաբեկի Հովհաննիսյանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 253 /243

12 սեպտեմբեր 2018թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 87-Ն որոշումը և համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 9-ի թիվ 06 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Բուլիկ Քաջիկի Վարդանյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի բնակիչ Բուլիկ Քաջիկի Վարդանյանին տրամադրել դրամական օգնություն 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ընտանիքում առաջացած սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 254 /244

17 սեպտեմբեր 2018թ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Էդգար Աշխարհաբեկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 17042015-07-0047), քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 32 հասցեում գտնվող 0,06 հա մակերեսով հողամասի և (սեփականության իրավունքի գրանցման վկայական N14092018-07-0077) քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 32/1 հասցեում գտնվող 0,019 հա մակերեսով հողամասերի միավորման հետևանքով առաջացած 0,079 հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը՝քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 32:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 245

17 սեպտեմբեր 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 245-254 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 04-ի << Հողի հարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 245 որոշման համարը՝ <<245>> թիվը փոխարինել <<235>> թվով:

2. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 04-ի << Գույքահարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 246 որոշման համարը՝ <<246>> թիվը փոխարինել <<236>> թվով:

3. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 04-ի << գույքահարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 247 որոշման համարը՝ <<247>> թիվը փոխարինել <<237>> թվով:

4.Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 04-ի << Հողի հարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 248 որոշման համարը՝ <<248>> թիվը փոխարինել <<238>> թվով:

5. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 06-ի <<Արմեն Ավակ Ավակյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին հասցե տրամադրելու մասին>> թիվ 249 որոշման համարը՝ <<249>> թիվը փոխարինել <<239>> թվով:

6. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 06-ի <<Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ հրավիրելու մասին>> թիվ 250 որոշման համարը՝ <<250>> թիվը փոխարինել <<240>> թվով:

7. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 07-ի <<Որոշումը չեղյալ ճանաչելու մասին>> թիվ 251 որոշման համարը՝ <<251>> թիվը փոխարինել <<241>> թվով:

8. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 10-ի <<Ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին>> թիվ 252 որոշման համարը՝ <<252>> թիվը փոխարինել <<242>> թվով:

9. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 12-ի <<Դրամական օգնություն տրամադրելու մասին>> թիվ 253 որոշման համարը՝ <<253>> թիվը փոխարինել <<243>> թվով:

10. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի <<Հողամասերի միավորման հետևանքով առաջացած հողամասին հասցե տրամադրելու մասին>> թիվ 254 որոշման համարը՝ <<254>> թիվը փոխարինել <<244>> թվով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 246

18 սեպտեմբեր 2018թ.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կարինե Խաչատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարինե Խաչատրյանին տրամադրել հանգստի տնակների կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողություն իրականացումը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 247

19 սեպտեմբեր 2018թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արտաշես Վարազդատի Դավթյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Սարալանջի փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող, Արտաշես Վարազդատի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 27,54 ք.մ. արտաքին մակերեսով վարչական շենքը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 143 208 (հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 248

20 սեպտեմբեր 2018թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Պետրոս Անդրանիկի Աղեկյանին տրամադրել 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Մ.Մկրտչյան 39 հասցեում,48 քմ տարածքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 249

20 սեպտեմբեր 2018թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Պետրոս Անդրանիկի Աղեկյանին տրամադրել 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում քաղաք Ծաղկաձոր, Մ.Մկրտչյան 39 հասցեում,48 քմ տարածքում ոգելից խմիչքների վաճառք կազմակերպելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 250

24 սեպտեմբեր 2018թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169 [16]-րդ հոդվածի 9-րդ մասով և 219 [1] հոդվածով և հիմք ընդունելով, որ <<Պետրոսյանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից քաղաք Ծաղկաձոր Մհեր Մկրտչյան 18 հասցեում 2018 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում առանց համապատասխան թույլտվության իրականացվել է հանրային սննդի կազմակերպում և իրականացում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Պետրոսյանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 03545908/ տնօրեն Մնացական Պետրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 80 000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 251

24 սեպտեմբեր 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 241 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 07-ի << Որոշումը չեղյալ ճանաչելու մասին>> թիվ 241 որոշման վերնագրում և 1-ին կետում <<Չեղյալ>> բառը փոխարինել <<ՈՒժը կորցրած>> բառով, որոշման հղումներում <<38>> թիվը փոխարինել <<37>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 252

24 սեպտեմբեր 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 235-238 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 04-ի << Հողի հարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 235, << Գույքահարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 236 , << Գույքահարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 237, << Հողի հարկի գումարի պահանջ ներկայացնելու մասին>> թիվ 238 որոշումներում՝ եզրափակիչ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:>>

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 253

25 սեպտեմբեր 2018թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշումներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արգամ Հովիկի Աբրահամյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Անտառային 1-ին թաղամաս թիվ 2 (նախկին հասցեն՝ ք. Ծաղկաձոր, ԳՄՀ-ին հարող տարածք) հասցեում գտնվող, Արգամ Հովիկի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 786,8 ք.մ. արտաքին մակերեսով հանգստյան տունը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 4 091 360(չորս միլիոն իննսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:
4. Նշված գույքին տրամադրել հասցե՝ քաղաք Ծաղկաձոր, Անտառային 1-ին թաղամաս թիվ 2:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 254

26 սեպտեմբեր 2018թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Անժելա Ռուբիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիրը՝ 07-005-0026-0635) քաղաք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 5՝ հասցեում գտնվող 0.26 հա մակերես ունեցող հողամասի բաժանման հետևանքով առաջացած 0,04 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 5/1, իսկ մնացած՝0,22 հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը՝ քաղաք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 5:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 255

27 սեպտեմբեր 2018թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՆՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Անահիտ Արշավիրի Սարգսյանին պատկանող (ըստ օրենքի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի՝ տրված 2018 թվականի սեպտեմբերի 26-ին, ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար Էլմիրա Դանիելյանի կողմից,գրանցված է գրանցամատյան թիվ՝ 11933) 0.06հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 30/3:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 256

27 սեպտեմբեր 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սույն թվականի սեպտեմբերի 29-ին կազմակերպել Ծաղկաձոր քաղաքի օրվան նվիրված միջոցառում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 257

27 սեպտեմբեր 2018թ.

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Առևտրի և ծառայությունների մասին> օրենքի 17-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծված աշխատանքային խմբին՝

Խմբի ղեկավար՝ Արմեն Արշակյան,

Անդամներ՝ Լեյլի Խաչատրյան,

Արա Մեսրոպյան,

Էդգար Հովհաննիսյան

տալ հանձնարարագիր՝ առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հսկողություն իրականացնելու կարգի համաձայն, օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 2-ը իրականացնել հսկողության միջոցառումներ հետևյալ կազմակերպություններում և անհատ ձեռնարկատերերի մոտ՝

1) <<Գոլդեն փելիս հյուրանոց>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 27

2) <<Կար Գոռ Մառ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 27

3) <<Առողջարան Ռիպա>>Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 27

4) Անհատ ձեռներեց Աննա Սիմոնյան- 2018 թվականի սեպտեմբերի 27

5) <<Կեչի հանգստյան տուն>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 27

6) <<Դոմինիկա >> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 28

7) <<Ադոմաս>>Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 28

8) <<Ակո Ֆուդ>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 28

9) <<Լեռնատուր>> Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի սեպտեմբերի 28

10) Անհատ ձեռներեց Պետրոս Աղեկյան- 2018 թվականի սեպտեմբերի 28,

11) <<Ծաղկահովիտ>> – Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի հոկտեմբերի 01

12) <<Անտանա>> – Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի հոկտեմբերի 01

13) <<Ֆաբիան>> – Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - 2018 թվականի հոկտեմբերի 01

14) Անհատ ձեռներեց Գալստյան Արտյոմ- 2018 թվականի հոկտեմբերի 02,

15) Անհատ ձեռներեց Սաթենիկ Բաբայան- 2018 թվականի հոկտեմբերի 02,

16) <<Ծաղկաձորի ստեղծագործական տուն>> Փակ բաժնետիրական ընկերություն - հոկտեմբերի 02:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ